

Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՊՄՀ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 – 2017թթ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մեծարգո նախագահություն, համաժողովի պատվիրակներ.

Թույլ տվեք ձեզ ներկայացնել Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավար-  
ժական համալսարանի արհեստակցական կազմակերպության 2012թ. հունիսի 6-ից մինչև  
2017թ հուլիսի 6-ը վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը:

2012թ. հունիսի 5-ին վերստուգիչ հանձնաժողովի նախագահ էր ընտրվել Մկրտիչ  
Ղուկասյանը , հանձնաժողովի անդամներ Հռիփսիմե Բազինյանը և Տիգրան  
Թանգամյանը: Սակայն 2014թ. սեպտեմբերին հանձնաժողովի նախագահի  
պարտականությունները արհկոմիտեի որոշմամբ հանձնարարվել է հանձնաժողովի անդամ  
Տիգրան Թանգամյանին, քանի որ Մ.Ղուկասյանը և Հ.Բազինյանը ազատվել էին  
աշխատանքից: Ուստի հաշվետվությունը ինքս կներկայացնեմ :

Համալսարանի արհեստակցական կազմակերպության ֆինանսական միջոցները  
գոյանում են անդամավճարներից` 1 % և մինչև 2014թ. ուսանողների համար գործատուից  
ստացվող օգնություններից ու կրթաթոշակից :

Արհկոմիտեն տրամադրել է ֆինանսական միջոցներ աշխատողների և ուսանողների  
հանգստի , բուժման և մշակութային միջոցառումների կազմակերպման համար:  
Հաշվետու ժամանակաշրջանում արհկոմիտեն իր միջոցները ծախսել է համաձայն  
նիստերի ընդունած որոշումների:

Վերստուգիչ հանձնաժողովը շնորհակալություն է հայտնում արհկոմիտեին` նախագահ  
տիկին Հասմիկ Սարգսյանի ղեկավարությամբ հաշվետու ժամանակաշրջանում  
աշխատանքները բարեխիղճ կազմակերպելու համար:

Հանձնաժողովի նախագահ

Տ.Թանգամյան